

ԴՐՈՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ ՊՈԼՍԻ ԿԵԻ ԿՕՄԻՏԷԻ

Օ Ր Ջ Ա Ր Ե Ր Ա Կ Ա Ն Ը

(Տարածած կուխոց առաջ, տաճկերէն լեզուով)

Քեզ ենք դիմում սրանով, տաճիկ ժողովուրդ, և ոչ թէ այն պատճառով որ երկիրը ենք կրում քեզանից, կամ այլ և այլ միտումներ ունենք. — ո՛չ, մենք արհամարհանքով ենք նստում մահաւան երեսին, — քո կառավարութիւնն է մեզ այդ սովորները: Մենք դիմում ենք քեզ միայն մի նպատակով՝ յայտնելու քեզ, որ քո դէմ մենք ոչինչ չունենք: Դարերից ի վեր մեր հայրերը ու պապերն ապրում էին քեզ հետ հաշտ ու խաղաղ, ունենալով մի հայրենիք ու ընդհանուր նպատակներ: Սակայն այս վերջին ժամանակները, ոճիրներով ստեղծած քո կառավարութիւնը սկսեց խռովութիւններ սերմանել մեր մէջ, որպէս զի աւելի մեծ դիրուժեամբ: Խեղդի և քեզ, և մեզ: Դու չհասկացաք, ժողովուրդ, այս դիւակաւ քաղաքականութիւնը և մեր եղբայրների արեան մէջ թաթախած՝ դու մեզ սակից գտնեցար այդ զաղրելի ոճրագործութեան: Բայց թող քաջ յայտնի լինի քեզ, որ մեր կուխը ոչ թէ քո դէմ է, այլ քո կառավարութեան: Դրա դէմ են կուռում և քո լաւագոյն զաւակները, որոնք կառավարչական ներկայ ձևերում իրենց հանգստութիւնը միմիայն Բօսֆօրի սրընթաց ալիքների մէջ են գտնում: Մտածիր, ժողովուրդ, ո՛վ է քո թշնամին և ո՛վ քո բարեկամը:

Մ Ի Ա Ր Ա Տ Ա Ի Ո Ր Է Ք

Քո հարազատ զաւակներին անարգում են, հայ ժողովուրդ: Քո պաշտելի հերոսներին վատարար քարեր են նետում...

Ո՛ւշ դարձուր, որպիսի՝ ներդաշնակութեամբ մեր ար-

տաքին և ներքին թշնամիները գործում են այսօր նոյն ոգուով նոյն դրդումներով, որպիսի՝ եռանդով ձգնում են նրանք նսեմացնել, անւանարկել հերոսական գործի հեղինակներին: Նրանց „օտար պետութիւնների ձեռքին գործիք“ հրատարակեցին, նրանց „աւազակ“, դախտախնդիր“ ստոր անուններով կըքեցին, նրանց, վերջապէս, քեզ թշնամի հռչակեցին, հայ ժողովուրդ, քո իրական շահերին միասող, քեզ հետ ոչ մի առնչութիւն չունեցող, քեզ ամեն բանով օտար...

Դառն է, քստմնելի է իրողութիւնը:

Մարդիկ կուռում են, ահաբեղե մահը աչքերինն առած՝ ծածանեցնում են ապստամբական դրօշակը, մարդիկ չը լուծած, առասպելական յանդգնութեամբ ահեղ անհաւասար ճակատամարտ են մղում, փայլուն անձնագոհութեամբ դիմում են դէպի կորստեան անդունդ՝ դէպի մռայլ բանտեր, դէպի անողորմ, դժոխային տանջանքներ, դէպի արիւնոտ կախաղան... մարդիկ պարաստ են կրել այդ բոլորը,—իսկ նրանց պարսաւում են, ստորացնում, նրանց հռչակում են ազգամեծաններ, փանախիկոս աւազակներ, Անգլիայի, Ռուսիայի լրտեսներ, ազգային դատի դաւաճաններ...

Ազգային դատի դաւաճան... Սակայն ո՛վ է այդ դատի պաշտպանը, ո՛վ քե՞ր են նրա ամենապերճախօս փաստաբանները, նրան մշտապէս զարկ տւողները: Եթէ հայկական յեղափոխութիւնը հայկական դատին թշնամի է, հապա դո՛ւք էք պաշտպան, եսամոլ զիպլոմատներ, կամ դո՛ւ, բուրժուական, վաճառած մամուլը:

Եթէ յեղափոխական բովը չորոտար, եթէ Պոլիսը անիշխանութեան չմատնէր, արդեօք մի՞ բուպէ, գէթ մի վայրկեան պիտի մտածէ՞իք, որ հայն էլ դատ ունի, որ նա ևս ձգտում է մարդավայել կացութեան. արդեօք հայկական չարատանջ հարցը պիտի հանդէս գա՞ր...

Հայ ժողովուրդը շատ յուսաց, շատ լաց եղաւ ու հառաչեց: Մեր եղբայրների, մեր սգացած մայրերի ու քոյրերի դառն մորմուռները դարե՞ր է, որ հնչում են Ցաճկահայաստանի արիւնոտ խորքերից, դարե՞ր է, որ բռնակալը հնձում է մեր լաւագոյն ուժերը, իր դիւակաւ մեքենայով սարսափ ու արհաւիրք է սփռում մեր բազմատանջ հայրենիքում:

Եւ այդ բոլորը քո յանցաւոր աչքերի առաջ, անդո՛ւթ քաղաքակրթութիւն:

Ի՞նչ արեցիր: Պարիւն թափիր—ազատենք—անպորոյն դէպիլը քարոզեցիր դու սկզբում: Յուզած, թշուառութեան գագաթնակէտին հասած մարտիրոս ժողովուրդը բողոքեց սխտեմաբար, իր բովանդակ հայրենիքը արեան գետերով ոռոգեց, աղիողորմ գանգատներ հնչեցնելով, արիւնաքամ եղաւ...

Տեսար, լուեցիր... Բերանդ փակ մնաց, ձեռքերդ ծալած, լեզուդ պապանձած: Թողիր, որ գազանը անպատիժ կերպով պատուոտ էր զոհին, թողիր, որ հայ մարտիրոսների դիակները ծածկեն հայոց շէներն ու քաղաքները, դաշտերն ու ձորերը... Թողիր այդ բոլորը, Եւրոպա, և քո յանցաւոր անտարբերութեամբ խրատուեցիր բռնակալին՝ առաջ տանելու իր սխրագործութիւնները... Այո, դո՛ւք՝ լուսաւոր աշխարհի բռնաւոր ներկայացուցիչներ, դուք աւելի արիւնարբու եղաք, քան Ելզըզ-Քէօշքի արիւնաբբու վագրը:

Ո՛ւր մնացին ձեր սրբազան աւանդութիւնները, ո՛ւր ձեր յեղբայրսիրութեան, յմարդասիրութեան մեծահնչուն քարոզները... Ձեր պապերը, ձեր նախնիքները սովորեցրին մեզ ապստամբել և բռնութեամբ կործանել բռնաւորի լուծը. նրանք աւանդեցին մեզ հայրենասիրութեան, ազատութեան վեհ գաղափարները, իսկ դո՛ւք, անարժան յաջորդներդ, դատապարտում էք այսօր մի բուռն ժողովուրդի յեղափոխական քայլերը և արամազդեան շանթեր էք արձակում այն անձնէր հերոսների դէմ, որոնք սառնասիրտ կերպով չեն կարող նայել արեան և արտասուքի անվերջ ովկեանին...

Ո՛չ պաշտօնական ժանգոտած Եւրոպա, օգնութիւն սպասելու չէ քեզնից. մեր յոյսը, մեր ապակէնը դարձեալ նոյն յեղափոխութիւնն է, նոյն յեղափոխականները, որոնց անգթաբար անարգեցիք՝ դու և քեզ խնկարկու գրչածախ մամուլը, որոնց դուք այնքան ստոր ու կեղտոտ ածականներով կնքեցիք...

Հեռու, անարժան, վաճառուած մամուլ, գնա՛ դու ըստորութեամբ քծնիր ուսական դեպարտմէն առաջ, դնա՛ դու խուճկ ծխիր համաշխարհային բռնապետներին, քո ստոր քննադատութիւնից վեր է, բարձր է հայ յեղափոխականը: Հեռու՛ դուք բոլոր անկոչ քննադատներ, հայ և օտարազգի ուխտագրութներ, չափաւորութեան, խաղաղ առաջադիմութեան մեծախօս ասպետներ, հեռու՛ ձեր զգօրելի յիշոցներով, ձեր ստոր ինսինուացիաներով... մեր Բաբելէնների, մեր Սուրէնների, Գնունիների, Միսաքեանների, մեր հարիւրաւոր նահատակ հերոսների ուրախանները սպառնում են ձեզ իրենց թալմ շիրիմներից... հեռու՛. յեղափոխական Սուրբ Տաճարի շէմբում՝ դուք կայան չունիք: Թափեցէք որքան կուզէք, կոկորդիլոսի արցունքներ, ճառեցէք, որքան կուզէք, հայկական դատի անունով, սահայն մի անարգեցէք, մի՛ արատաւորէք յեղափոխականի անունը. նա բարձր է, վսեմ, նա միշտ կը լինի բարձր, նւիրական, և միշտ կը լինի նա հայ բազմաչարքար ամբողջ

խի հարազատ ծնունդ, նրանից անբաժան, նրա Սուրբ Գատին զօրաւոր նեցուկ:

Իսկ դուք բոլորդ էլ օտար էք նրան և պիտի մնաք օտար:

Ե Ր Ե Գ Մ Ա Հ

(ԲԱԲԵԼՆԻ, ԳՆՈՒՆՈՒ ԵՆ ՍՈՒՐԵՆԻ ՅՈՇԱՏԱՆՆԻ)

«Անցի՛ր, լուր տար Սպարտացոց, որ մենք ընտրա ընկանք պատեռ, չարքանքի օրէնքներին հաւատարիմ մնալով...»

Իմ աչքերիս առաջ կանգնած են երեք անձնաւորութիւն, նրանք այլևս չկան—մեռած են. նոցա սուերն է այդ, նոցա ուրախանը. կանգնած են աչքերիս առաջ և ինձ հանգիստ չեն տալիս—հալածում են: Աշխատում եմ մոռանալ. աշխատում եմ մի ուրիշ բանի մասին մտածել, բայց ի՛ զուր. նոքա հետս են ու հետս, և հաւատացած եմ, որ միայն ես չեմ, որ այդ մեռած սուերների հալածանքի առարկան եմ:

Ո՛վ են դրանք, որ իրենց յաւիտենական հանգիստը թողած՝ ապրողներին հոգեկան խաղաղութիւնն են խանգարում. ի՞նչ են ուզում, ի՞նչ...

Լարում եմ ուշադրութիւնս, կրկնապատկում եմ աչքերիս ոյժը ու գրգուռած աչքերովս տարօրինակ, անսովոր փոփոխութիւն եմ տեսնում այդ ինձ լաւ ծանօթ դէմքերի, մէջ: Ահա Բաբելէն-Միւնին—նա է, ես այդ լաւ եմ տեսնում—բայց նա ամբողջ էի, նրա մի մասն է՛ այդ... նրա մարմնիկտորները Օտօման բանկի սրահում են դէս ու դէն ցիրուցան եղած: Ի՞նչ է այդ, մտածում եմ ինքս ինձ—«Ազատութիւն» հասնում է ականջիս մի ինչ որ աներևոյթ ձայն և ես պարզ, որոշ տեսնում եմ, թէ ինչպէս Բաբելէն-Միւնին ուղեբերը ձեռքին «Ազատութիւն» պոռալով, Օտօման բանկն է մտնում... ինչպէս նա այրած, խորոված թղթերով իր նպատակին համարեա թէ հասած՝ սանդուխների առաջ ծունկ է չոքում և ապա մի վայրկեան ևս ու նրա մարմնի կտորները ուղեբի պայթումից պիտի դէս ու դէն շարուեն... Ա՛հ... Բաբելէնը հայ ազգի անդատանի վրայ... Այս ի՞նչ տարօրինակ սերմ է, որ նա սերմանեց հայ երիտասարդութեան, հայ ժողովուրդի սրտի մէջ և մի՞թէ այդ սերմը ապառաժ քարի վրայ է ընկած—և մի՞թէ սրանից յետոյ ևս Բաբելէնները հազարաւոր պիտի լինին, ինչպէս եղական էր Պոլսի վերաբերմամբ ինքը Բաբելէնը...


Բայց սոքա ո՞վ են, այս երկուսը: Սամաթիացիք սըրանց արևոյն են երդուում, սրանց քաջութեանը զարմանում: Երբ առիւծացած Գնունին պատուհանին էր մօտենում ու դուրսը թափահարելով ահարկու ձայն

նով անէծքներ թափում տաճիկ բռնակալութեան դէմ— պաշարողները սարսափահար անկիւններն էին քաշուով: Ո՛չ մի եւրոպացի չէր մտածում այդ ժամանակ առիւծներին օգնութեան դնալու... 18 ժամ անընդհատ 4-5 հոգով Սամաթիան պաշտպանեցին, ամբողջ տաճիկ բանակին դէմ կանգնեցին, հարիւրաւոր աւաղակներ յետադուրութեան՝ բերին ու Եւրոպան անիծելով՝ իրենց կեանքին վերջ դրին: Մեռնելու էին գնացել— մեռան, բայց թէ ի՛նչպէս: մեռան դիւցազնին վայել մահով:

Երբ ամեն ինչ սպառեցաւ և ոչ մի միջոց չէր մնացել կռիւր շարունակելու, մէկը... թոյն ընդունեց, միւսը՝ ընկճվելի վերջին գնդակը իր բերանն ուղղեց... մի փոքր թոյն ու ժանգոտած փամփուշտ— ահա թէ ի՛նչ է մնում հայ յեղափոխականին, հայ ժողովուրդը...

Ձեւ՝ կարող շարունակել. աչքերս մթնում են, հոգիս խաւարում. Բաբկէն, Գնունի, Սուրէն, Սուրէն, Գնունի, Բաբկէն... ամեն մէկը իր տարբեր մահով անընդհատ աչքիս առաջն են: Պաշտութիւն՝ կը պոռան սառը գերեզմանից. Պո՛րծ՝ կը շշնջեն նրանց փակ բերանները...

Թող այդ նւիրական Պործը՝ արձագանք գանի մատաղ հայ սրտերում, թող հայ հերոսների այդ երեք ներկայացուցիչների յիշատակը հայ յեղափոխականներին նորանոր անձուրաց գործերի առաջնորդէ, թող այդ անունները ոգևորեն նոցա, որոնք ընդունակ են ոգևորելու... Նորք սուրբ են, նւիրական են այժմ մեզ համար...



ՍԱՄԱԹԻԱՅԻՆԵՐՈՒ ՀԵՐՈՍԱԿԱՆ

Կ Ռ Ի Խ Ը

Եկա՛ւ վերջապէս օգոստոս 14-ը:

Չորեքշաբթին լուսացաւ. օդը գեղեցիկ և մեղմ էր, մեղմ էին և դէմքերը ու գեղեցիկ՝ հոգիները: Ամենքնիս ալ լուսաբացին կազմ ու պատրաստ էինք. ոգևորութիւնը ընդհանուր էր բոլոր ընկերների մէջ կուսելու մարմանը, մանաւանդ ուժմբերու փրկարար արդիւնքը շուտով վայելելու անհուն տենչը՝ գրգռիչ և վառվառն գրութեան մէջ էր ձգած տղերանց արամադրութիւնը:

Ինչպէս Պոլսոյ շատ մը կէտերը, Սամաթիան ալ լաւ պատրաստութիւն էր տեսած: Ռազմական ծրագիր մը կազմած էր, որը եթէ յաջողէր ի գլուխ հանել, հիւանալի արդիւնք ձեռք բերելու էինք: Չորեքշաբթի օրը ժամը 6-ին, ըստ թ. մեր գործը սկսելու էր: որքան անհամբերութեամբ երևակայութիւնը յուզող այդ ժամուն կսպասէինք: Մինչև երեքշաբթի երեկոյ մեծ քանակութեամբ ուժմբեր, 154 կտոր, ամեն տեսակէն, ցրած էին արդէն այն վանազան տեղերը, որոնք գործի պահուն նշանաւոր դեր խաղալու էին:

Քանի մը ահաբեկիչներ զինւած լաւ զէնքերով փամփուշտներու մեծ պաշարով որոշած ժամուն՝ (6-ին) յարձակելու էին տեղական զօրանոցի վրայ, որը բաւական մեծակալ և հաստատուն շէնք մ'է: Սպաննելով զօրքերէն մի քանիսին, նրանք փախչելու և ապաստանելու էին այն կէտի վրայ, որու շրջակայքի տուներու մէջ նախապէս ամեն տեսակ ռազմամթերքներով զինւած արիասիրտ երիտասարդներ սպասողական դիրքի մէջ մնալու էին, այնպէս որ երբ մեր տէրօրիսները կը մտնէին այդ կարեւոր կեդրոնի վրայ՝ նրանք խիստ դիւրութեամբ կարող կը լինէին այդ տուներու մէջ ապաստանիլ ու ազատիլ մինչդեռ զօրանոցի ամբողջ զօրքերը և ուրիշ պահականոցներէ հասած ոստիկանական ամբոխը մեր տէրօրիսները ձերբակալելու համար զանոնք հետապնդելով պիտի հասնէր նոյն կեդրոնի վրայ. այդ պահուն մեր աւերիչ դժոխային մեքենաները, մեր ուժմբերը պատուհաններէն փողոց նետւելով, պիտի ջարդուփշուր ընէին և կոտորէին Համիտի սիրելի և անձնէր զօրքերը: Երբ աստին՝ Սամաթիոյ գլխաւոր զինւորական ոյժը կը ջախջախէր, անդին շատ մը ընկերներ եկեղեցին հաւաքւելու էին, ուր կամաց-կամաց պիտի կեդրոնանային մնացած մեր բոլոր ուժերը:

Բայց անսպասելի արգելքներ եկան խանգարեցին ծրագրի ոգին:

Գիւղին մէջ տիրող ոգևորութիւնը զգալի էր. շարժումը շատ: Շատ մը ընտանիքներ իմանալով կամ կասկածելով, կանուխէն փախած էին Ս. Ստեփանոյի կողմերը: Սոյն անխոհեմ քայլը պատճառ եղած էր կառավարութեանը վաղուց ունեցած կասկածը հաստատելու: Անմիջապէս ոստիկանութիւնը սկսաւ ամեն դի շրջել փողոցներու մէջ:

Ժամը 2-ին ձերբակալութիւն մ'եղաւ Սամաթիոյ մէջ. սե՛ւ սուեր մը անցաւ փայլուն արևու վրայէն:

Խստութիւնները շատացան. գիւղը ամբողջովին պաշարման վիճակի մէջ էր. փողոցներու անկիւնները բռնւած էին:

Մեր ընկերները այդ միջոցին հաւաքւած էին Միսաբեաններու տունը, դեռ շատ կանուխ լինելուն անգամ մը ևս ժողոված էին միասին. երբ յանկարծ զիրենք պաշարւած տեսան: Գնունին կը փնտռէին, իր տանը տէրը ձերբակալւած էր արդէն: Դժուար կը լինէր այդ պահուն մեր ընկերներու զգացած կատաղութիւնը նկարագրել: Մի՛թէ այդքան շուտ: Որքան զօհորութիւններ եղած էին, ի՛նչ յղտեր գգւած էին ու դե՛ռ քիչ առաջ կարող էին իրագործել իրենց փափազը ու հասնել նպատակնուն, բայց առիւծները փակւած էին վանդակին մէջ, չէին կարող դիւրաւ դուրս ելլել. սակայն սպասեցէք, դո՛ւք սինը քորներ, Համիդ: օնպաշի ծառաները, սպասեցէք քիչ մ'ալ, դուք կը տեսնէք թէ այդ բանտարկւածները ինչպէս ձեզի կը հասկացնեն՝ թէ ի՛նչ կը նշանակէ իրենց փայփայած ու սիրած ծրագիրը խանգարել. դուք պիտի շուտով զգաք թէ ձեր գործը առիւծների, հերոսների հետ է, որոնք կարող կը լինեն ձեզի և դեռ ձեզպէս շատերին ջարդել, փշոել, բնաջինջ ընել...

Ժամը 3-ը եկած էր:

Պաշարողները սկսան բանակցիլ. Գնունին կը խօսէր նրանց հետ: Կ'առաջարկէին անձնատուր լինել — յժամի

6-ին, կը պատասխանէին մերոնք:

Այս կտրուկ պատասխանին մէջ կար մի խորին իմաստ, սպառնական և հեգնական: Ծամը 6-ին սկսելու էր ամբողջ Պոլսոյ դաշնակցականներու ճակատամարտը ու մեր ընկերները կը ծաղոզէին զիրենք պաշարող զօրքերը: Սպասելով որ կոիւր ամեն տեղ սկսի, որ իրենք էլ ցոյց տան շուտով իրենց ահագին ոյժը:

«Ծամը 6-ին միայն անձնատուր կը լլանք» կը կրկնէր Գնունին միշտ:

Տղայոց պաշարման վիճակի մէջ մնալը զիս յուսահատութեան կը տանէր, պէտք էր անպատճառ նրանց հետ բանակցութեան մտնել բայց այդ ինչպէ՞ս ընել: Իմ կանգնած տեղս ալ կամաց-կամաց զինւորները պաշարած էին, այնպէս որ մնացած էի շրջանակի մը մէջ, ուրկէ դուրս ելլելու համար հարկաւոր էր զօրքերի շարքերը կտրել ու անցնիլ: Մտեցայ բարձրաստիճան պաշտօնեայի մը, ենդրեցի, որ զիս ոստիկաններու միջոցաւ ամբոխի միջէն հասնէ, շուտով կատարուեցաւ իմ այս փափագը: Պաշտօնեան հրամայեց քանի մը զինւորներու, որ զիս առաջնորդեն և ի հարկին պաշտպանեն: Երբ հասայ ծանօթ անձի մը տանը մօտ, քովիներս հեռացնելէ ետքը, մնայ ներս: Այս տանը վերին յարկերէն կարելի էր բանակցիլ Միսաքեաններու տունը գտնուող տղերանց հետ, ինչ որ յաջողեցայ անմիջապէս: Սուրէնը յայտնեց իրենց դրութիւնը. պաշարուած էր կարող այդպիսիներին երբէք թուլացնել, եղածը եղած էր, պէտք էին շատ սուղը ծախել իրենց կեանքերը: Կիմացնէր որ բոլորն ալ մեռնելու պատրաստ են, թէ պիտի կուին մինչև վերջին գնդակը և վերջին ուժը, թէ ոչ մէկերնին անձնատուր լինելու չէր երբէք:

Բայց կուզէին Աեդրոնական Կոմիտէին նախօրօք տեղեկացնել իրենց պաշարած դրութեան մասին: Սուրէնը յանձնարարեց ինձի, շուտով մեկնիլ և պատասխան մ'ալ բերել, թէ միւս կողմերի ընկերները ի՞նչ ջուրի վրայ են: Հարցը լուրջ էր. անհրաժեշտ էր Աեդրոնական Կոմիտէին անմիջապէս իրաց վիճակի և տղայոց նպատակի նկատմամբ լուր հաղորդել, որպէսզի ընդհանուր ծրագիրը փոքր անգոռու չլուծուի:

Հրատե՛շտ տալով ընկերներուս, որը վերջին անգամը լինելու էր՝ ես շտապեցի իմ պաշտօնը յաջող կերպով կատարել:

Աեդրոնը զիս ապահովեց, որ գործերը լաւ կարգին էին ամեն տեղ և որոշած ժամուն պայթելու էր կոիւրը: Թամանակը մօտ էր:

Աերադարձայ կրկին Կիւր. բայց ճանապարհի վրայ յուզումը արդէն նշարեցի. ձիաւոր թղթատարներու արագ-արագ երթուկը զգալի էր. տեղ-տեղ խմբակներ կը նկատէի, շշուկը սկսած էր, երևի Սամաթիոյ պաշարման լուրը տարածուել էր մինչև այդ կողմերը: Հեծեալները և զօրքերը գիւղին մէջ շատացել էին. խտտութիւնները չափազանցած, երթուկը թուլացած:

Ծամը 5-ն էր: Տուններու դռները արդէն գոցուած էին: Վարժարանը պաշարած էր. հոն ալ կասկածանքի տակ էր ընկած:

Ծամը 6¹/₂-ն էր:

Յանկարծ ահագին դղրուումներ, սարսափերի՝ որոտումներ լսելի սկսան: Տղերք վերջապէս իրենց իդէալին հասել էին. ուժերը կատաղութեամբ կը նետէին:

Ամբողջ գիւղը սարսուռի մէջ էր. գետինը կը սարսէր, օդը գոռ ու գոչի մէջ էր:

Կարմիր տէրրօրը սկսած էր:

Սարսափը մեծ էր. իրարու ետևէ ուժերը այլևայլ տեղերէ կը նետէին փողոցը և կը կոտորէին զօրքերը: Սպանւածները շատ էին: Պաշարողներու կողմանէ անդադար և կատաղի հրացանաձգութիւն կար տուններու վրայ. մասնաւորապէս Միսաքեաններու տանը և մանչերու վարժարանին վրայ:

Առաջին ուժը կին մը նետեց թշնամիին գլխուն. կին մը, որը հակառակ իր տարիքին, ցոյց տուա զօրքերուն թէ՛ հայ կիներն ալ գիտէ հայրենիքի սուրբ դատին համար կուիլ ու զենք շարժել:

Օրինակը քաջաբերական էր. ընկերները բարոյապէս աւելի ուժովցած, առատօրէն կը գործածէին հրաշագործ ուժերը:

Այդ միջոցին փոխադարձ յարձակում տեղի ունեցաւ. մինչդեռ մեր քաջերէն քանի մը հոգիներ զօրանոցի վրայ խուժելով՝ ատրճանակներով կրակ կընէին պահպաններու վրայ ու խոյս կուտային, անդին՝ զօրքերը թուլ աւելի ուժովցած, նոր յարձակում մը կընէին մանչերու վարժարանին վրայ ու անամօթաբար ետ կը մղէին, շատ զոհեր թողնելով փողոցին մէջ:

Ըփոթը, ստոկոմը անկարագրելի էր:

Հայեր փախչող փախչողի էին, բայց անփութակց դրութեան մէջ, առանց ուր վագներին գիտնալու: Տուներէն դուս ելլելով խոյս կուտային, թէ պատահաբար փողոցը գտնուելով յանկարծակի եկած էին՝ այդ կէտը մոլթ է ինձ. մինակ այս լաւ գիտեմ, որ ջարդելու խիստ հրաման տրուեցաւ:

Խառնակութիւնը աւելի ծանր կերպարանք ստացաւ. փախչողները շուտով անխուսափելի մահը կը գտնէին... Վատ հոգի՛ զինւորներ, որ միայն լաւ գիտեն անգէն ժողովուրդը սպաննել:

Արդէն ամբողջ գիւղը կրակի մէջ էր:

Փողոցներու մէջ ծուխը լեցած, օդը միշտ որոտման մէջ. արհաւիրք և սարսափ, դժոխացուցած էին Սամաթիան:

Ծամը 12-ն էր: Կոիւր դադարեցաւ:

Մեծ դժուարութեամբ՝ բաւական ժամանակէ վերջը յաջողեցայ վարժարանի մէջ դանուղ ընկերներու հետ բանակցիլ: Տղերք շատ ուրախ տրամադրութեան մէջ էին. դեռ բնաւ իրենցմէ զոհ տուած չէին: Ծիծաղով կը պատմէին ինձի, թէ ինչպէս կոտորած էին զինւորները. թշնամին շատ զոհեր տուած էր: Կը խնդրէին, որ փամփուշտ հասցնեմ իրենց, որովհետև ունեցածնին առատօրէն գործածած էին: Բայց ինձ անկարելի էր դոհացում տալ ընկերներուս այդ պահանջին. ուստի յաջողութիւն մաղթելէ ետքը իրենցմէ բաժնեցայ...

Խորին լուսութիւն մը յաջորդած էր: Երկու կողմանէ ալ պատրաստութիւններ կը տեսնէին: Մերոնք դիրքերը կամրացնէին, ռազմաթերթները, ատրճանակները անմիջական գործածութեան մը տրամադրելութեան մէջ կը դնէին: Թշնամին նոր ուժերով աւելի զօրացած էր: Գիշերային լուսութեան մէջ կը լսուէին երբեմն ընդհատ կերպով աղմուկներ, հրահանգներ կը տրուէին տաճիկ խումբերուն:

Ծամը 4-ին կոիւր յանկարծ նորէն սկսաւ. սակայն մեր տղերքը երևի պաշարնին խնայելու դիտաւորու-

Թեամբ, քանի մը ուումբեր նետելով բաւականացան, անկէ վերջը պաշտպանողական դիրք բռնել սկսան:

Հաս չաւեց այս երկրորդ յարձակումը. զօրքերը երբ տեսան, որ իրենց կրակին պատասխանող չէր լիներ, դարբեցուցին շուտով իրենց ապարդիւն հրացանաձգութիւնը:

Երկրորդ դադար. դարձեալ խոր լուռութիւն: Կը կարծէի թէ ամեն բան վերջացած էր, երբ յանկարծ ժամ 7-ի ատենները սուկայլ՝ որոտումներ լսելով ընդոստ արթնցայ. քիչ մը քնած էի, եթէ կարելի էր քնել այդպիսի ժաման...

Կռիւր նորէն վերսկսած էր. կռիւ մը, որ վերջինը եղաւ: Թէև շատ մը մանրամասնութիւններ յետոյ իմացայ, բայց պիտի ջանամ դէպքերը իրենց ժամանակին պատմելու, իբր ակնատես:

Նախ վարժարանին վրայ յարձակեցան. բաւական լաւ դիմադրութիւն ցոյց տրւեցաւ, սակայն թշնամուն ոյժը անհամեմատ կերպով մեծ էր, այնպէս որ շնորհիւ իրենց ունեցած կացիներու, որով հանդիպած արգելքները կը խորտակէին, քիչ վերջը յաջողեցան դռնէն ներս խուժել և տղերքը փնտռել: — Հոն սպաննեցին Սողոմոնը, որ շարունակ արիաբար կուած էր: Մարդասպանները ոտքերէն կապելով քաշքշելով մինչև փողոցը հանեցին: Մինչդեռ ներս վազող զօրքերուն մէկ մասը խեղճ Սողոմոնով զբաղւած էր, ուրիշներ՝ վարժարանին սենեակներուն մէջ վեր ու վար, ամեն դին, որսը ձեռքէն փակցնող որսորդին պէս՝ խելագարի նման տղերքը կը փնտռէին. ասոնք մնացած երկուքը, պատուհանէ մը վար ցատկեցին, որոնցմէ մէկը յաջողեցաւ հրաշքով ազատիլ այդ զօրքերու բազմութեան մէջէն: Իսկ միւսը անմիջապէս տեղն ու տեղը սպաննեցին:

Երբ վարժարանի մէջ սոյն տրամը տեղի կուենար, այնտեղ Միսաքեաններու տունը սրտաձկիկ տեսարան մը կը ներկայացնէր:

Տղերք հաւաքւած էին. իրարու ջերմ ու սրտադին հրաժեշտի համարոյնքն անտարբէր փոխանակելէ վերջը, անմիջապէս դործի սկսելով, ունեցած ամբողջ ուժերնին կը հաշտէին: Դեռ զոհ մը չէին տւած: Վեց հոգի էին. Գնունին, Սուրէնը, 2 Միսաքեան եղբայրները, մայրերնին և ինծի անծանօթ մէկը: Ամենէն էական հարցը ռազմավթերքներու խնայողական գործածութիւնն էր. կարող էին դիմադրել մինչև իրենց պաշարի սպառումը. բայց լաւ չէր, որ քանի մը ժամ անելի կուէին: Արդէն բոլորն ալ քաջ ըմբռնած էին, թէ շատ ապրելու չէին, սակայն և այնպէս երդւեցին մաքառիլ մինչև վերջ և յեղափոխականի մը արժանի մահովը միայն մեռնիլ: Աւ այդ իմաստով ճառեր խօսուեցան, ոգեւորիչ և սարսուռն: Գնունին սկսաւ և Սուրէնը վերջացուց: Սուրէնի վերջին բառերն եղան — «Ուրեմն մեռնի՛նք, կըլայրնե՛ր»:

Սկսաւ կատաղի, հերոսական կռիւր:

Յանկարծ պատերազմական փողերու ձայնը լսուեցաւ, այս ձայնը խառնելով ուումբերու և հրացաններու հանած որոտընդոստ արմուկին հետ, ասեղ տպաւորութիւն կը ներշնչէին երկչոտին, խանդ ու եռանդ կըւողին:

Արշալոյսը սկսած էր. մթութիւնը կամաց-կամաց տեղի կուտար լուսոյ առաջ: Գիշերւան հետ միասին կաներելութեան այն սեւ-սեւ մտածումները...

Լուսացած էր:

Տղերք նոր ոգի առած՝ կը շարունակէին կռիւր, բայց հասած էր ճգնաժամը... վայրկեան մը ունեցած յոյսերնին շուտով մարեցաւ:

Զօրքերը, որ անհատներէ կերևային, միշտ նոր ուժերով ամրանալով, յանկարծ դազանացած կատաղի կերպով յարձակեցան տանը վրայ. այս անգամ յաջողեցան դռները կտորել և ասա ամբոխը ներս խուժեց: Յ տղերք կապաններն, բայց երկուքը կը մնան տակաւին ողջ:

Կռիւ չէ այլևս, ձակատամարտ է:

Սուրէն և Գնունին դեռ կը մաքառին. կզգան որ վսեմ վայրկեանը մօտեցած է. բայց քանի մը հոգի-նքն ալ կուզեն սպաննել: Նոր հարւածներ, նոր դոհեր:

Վերջապէս, ալ դիմադրութիւնը անկարելի լինելով, փոխանակ անձնատուր լինելու, իրենց ձեռքերով վերջ կը դնեն կեանքերնուն:

Զօրքերու այդ վայրկեանին բռնած դիրքը դերասանականալի է: Ջարդել, փշրել ամեն կողմ, կողպտել, աւարել ամեն բան:

Գիւղի վիճակը հինգշաբթի առաւօտ խիստ տխուր էր: Տուները թալանւած, կործանւած, ընտանիքներ ալ ջարդւած էին: Կորուստը աւելի նիւթական էր:

Մեծ թւով ձերբակալութիւններ տեղի ունեցան, որոնց մէջ տեսայ, պահականոցի առջևէն անցած միջոցիս Միսաքեանց մայրը և իր հիւանդ քոյրը, որոնք նոր բերւած էին հոն. շատ մը ծանօթներ նկատելով այդ տեղը, առանց արգելքի ներս մտայ բակը, ուր ժողովւած էին 50-ի չափ խեղճ կիներ: Հետերնին բաւական խօսելէ ետքը, մեծ դժուարութեամբ դուրս կրցայ պրծիլ:

Մամթեան այրիացած էր. գրեթէ աւերակ դարձած: Մեր ընկերներէն շատերը պատերազմի դաշտին վրայ մեռած էին, 18 ժամ կուելէ վերջը:

Կորուցիկ սիրելի՛ ընկերներ, բայց ցոյց տւինք թէ գիտնք կուելով մեռնիլ:

Չորեքշաբթին փառաւոր և նշանաւոր օր մ'եղաւ. առաջին անգամ ըլլալով, հայ յեղափոխականը ուումբով դուրս եկաւ և զարմացուց ու աստիճանեց ոչ միայն Ելլըզ-Քէօշքի բռնապետը, այլ ամբողջ քաղաքակիրթ Եւրոպան:

Դուք, հայրենիքի զոհեր, դուք, սիրելի ընկերներ, դուք ձեր մահով մեզի կտակեցիք ազատութեան սէրը, հայրենիքի և հայրենակիցներ ճամար անձնազոհ լինելու սուրբ զգացումը:

Դուք ընկաք կուսոյ դաշտի մէջ՝ ձեր գաղափարի պաշտպանութեանը համար:

Հայ յեղափոխականներ, հայութեան դուք մարտիրոսներ, դուք հասկացած էիք, որ ներկայ կուէի ելքէն է կախած ձեր եղբայրներու, հայրենակիցներու փրկութիւնը: Դուք զգացած էիք, որ չորեքշաբթին մի մեծ, վսեմ օր լինելու է, ուր ցոյց տալու էիք շուտով, դուրս պոռթկալով յանկարծ, ոգի, եռանդ, քաջութիւն, ոյժ, տոկունութիւն և հերոսութիւն: Այո՛, դուք լաւ գիտէիք, որ կռիւր լինելու էր կատաղի, անհաւասար, կը նախազգայիք, որ մեռնելու էք այդ օրը, բայց չը վարանեցաք վայրկեան մը: Դուք սիրով նետուեցաք այդ վտանգաւոր գործին մէջ, խմեցիք մահուան դառը բաժակը, առանց տրտունջի, սրտի անհուն գոհանակու-

Թեա՛մբ դուք կատարեցիք ձեր պարտքը դէպի Հայրենիքը, Հայրենակիցները, մարդկութիւնը և դէպի ընկերները:

Ազատութեան սիրոյ Համար, դուք մարտնչողներ, երջանիկ էք դուք: Դուք անձնուրացներ, չորեքշաբթիի անձնազոհներ, անմոռանալի էք դուք:

Իսկ դու ալ, Հայ ժողովուրդ, ուրախ եղիր, որ այս տեսակ հերոսներու ծնունդ տւիր: Նոր է՛, որ Հայերը, քու որդիքդ, իրենց Հայրենիքի Համար կը մեռնին: Պատմութիւնը զարգարած է Հայ քաջերի գործքերով, բայց ժամանակը անցած է, եղանակները և միջոցները փոխուած են, Հայրենիքը աւելի պահանջոտ դարձած է, նոր հերոսներու, նոր անձնուրացներու պէտք ունի. մեծ գործիչներ յղացիր. ուրեմն:

Դու շատ սպասեցիր, շատ համբերեցիր, բայց հասաւ ասպարեզ գալու օրը: Այս օրը, Հայ ժողովուրդ, քո ճակատագրական րոպէներէն մէկն է, կուելու ես լարուած ուժերով, ձեռք-ձեռքի տուած Հայ յեղափոխականի հետ, քու հարազատ որդիքներուդ հետ, դուքս ե՛լ հրապարակ, խփի՛ր դու ալ թշնամիի գլխուն և ցոյց տուր, թէ կան քո մէջը այնքան բարոյական ու կենսական ոյժ, որ այս պատմական րոպէին, ուրկէ կանուած է ասպարեզ, դու, երեկւոյ ստրուկը, կարող կը լինիս կուել ճակատ առ ճակատ թշնամու հետ:

Պոլիս՝ օգոստոս 14-ով ցոյց տուաւ թէ Հայրենիքը կարող է դեռ վստահիլ իր յեղափոխականներու վրայ. Սամաթիոյ հերոսական կուրը մի փայլուն օրինակ է ամենուն համար:

Աեցցե՛ն ուրեմն Սամաթիոյ հերոսները...

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Շ Ո Ւ Ր Զ Ը

«Անոնք, որոնք յուսահատուած են, կըսէ մեծ քաղաքագէտ մը, ուրիշին անծին տէրն են»: Անշուշտ այն անձերուն, որոնք այդ յուսահատութեան պատճառն են: Մենք ուրեմն լիակատար իրաւունք ունինք սուլթանին կառավարութեան վրայ:

Հերիք է՛ն այսպէս տառապանքներ, հերիք է՛՞ այսքան արիւն: Դեռ լուրջ, որ Երուսղէի աւագակապետը վագրի անխղճութեամբ խոկայ մեր նահապետի եղբայրներու գերեզմանն քով եւ իրօճերով ու կենդանութիւնով լեցուն խաղաղ ազգ մը խողովորէի տիեզերքի ամենէն խուժողով, ամենէն զագրելի կառավարութեան մը ծեղրով:

Զէ՛, համբերութիւնը վերջակէտ մը ունի, եւ արդարութիւնը, իր վիճուք:

Աչքի առջև կը բերենք մեր դժբախտ հայրենիքը, որ հայութեան անհուն գերեզմանն եղաւ, թրքական մթին եւ անարկու բանտերը, ուր մեր նրբատաաքողութեան ծաղիկը խամրեցաւ, մեր որբերը, պարկերը, որոնք արցունքով կը սնանին, սարսուռ մը կանցի մեր վրայէն: Այդ սարսուռն է մեր մուսան:

Մեր դէմ ունինք կառավարութիւն մը, որուն մէջ և՛ զարակտի երդճի, քարոյակամութեան եւ հոգիի մեծութեան զգացումը:

Ինչնով կրնանք խօսք հասկնալ ստոր, որուն միակ սկզբունքն է բանդիլ ու աւերիլ--լաթիլ, ստրկեալանիլ:--Այդ ամենը կատարեցինք, մինչև իսկ մեր արժանապատուութիւնը ոտնակոխ ընելով: Եւ սակայն զազմուք չէր կասեր մեր սիրուն ազգը քանչի՛ն ընելէ:

Իրաց այս վիճակը չէր կարող յաւիտեան տեսիլ:

Օր մ'ալ յանկարծ, լալկան հայ ժողովուրդը սրբեց իր արցունքները: Այդ օրէն ի վեր այլևս չարտասեր, այլ արիւնով կը գծէ իր ազատութեան ծամբան: Անկա իր թափած արցունքի կաթիլներէն եւ արեան շիթերէն ումընք պատրաստեց: Օգոստոս 14-ի օրը հայութեան շողորմ եւ վրէժխնդրութեան գերագոյն արտայայտութիւնն էր: Այդ օրը միայն թշնամին սկսաւ մտածել:

Եւրոպան մինչև այդ ժամանակ Պերլինի Դաշնագիրը բարձիս տակ դրած կը մրափէր: Ռուսներու ծայրը սթափեցուց զինքը եւ Օսմանի մեծագոր կայսրութիւնը ծաթոտեցաւ ամեն կողմէ:

Արդարութիւնն ալ իր քնահատոյցը ունի: Հայկական ուժանակները ոչ միայն զուղեցին Պոլիսը, այլ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը: Եւրոպան շատ դիւրաւ չէ պիտի մոռանայ պատմական այդ երկար դէպքը:

Անգլիա զայրոյթի եւ բողոքի մարմնացումն եղած է այսօր սուլթանի սպառնալից կառավարութեան դէմ: Գաղտնիք մը ունենալու համար մնալից ժողովրդական շարժումն մը վրայ հարկէ, կըսէ թղթակից մը, աչքով տեսնել: Ժողովուրդ մը կըրք մարդկութեան դնտին համար այդքան առաջ զացած է: Պահպանողական մտաւոր ազատականին կընկերանայ իրենց ժողովուրդին զայրոյթի ծիշը եւ անոր հոգիէն բողոքը գլուխեան ծայրը տիեզերքի վրայ ցրելու համար: Հօտանէն մինչև յետին գիւղերու մէջ միջիններ կը կազմին, ուր կատնեալիսուն ամենէն պերճախօս անձնակառութիւններ: Այդ բոլոր արդարութիւն գոչող գլուխներու մէջէն, Կլատոսոն, հակառակ իր քաղաքային կենսութեան, բնմ կը բարձրանայ կրկին եւ սովորական վեր ու պատկանելի շեշտով կը շատագովէ մարդկային սկզբունքները «իրաւ է թէ, կըսէ Միծ-Ժողովուրդ, մեր բողոքը բնատոնէից պաշտպանութեան համար է, բայց նոյն համակրութեան ծայրը պիտի բարձրացնէինք, եթէ անոնց տեղ ըլլային մահմետական հնդիկ, պուտալական, կամ կոմիկիւններ»:

Պուլիարիսն ոչինչ է Հայաստանի անլուր սարսափներու քով կը ծայրէ ազգերու ազատարարը, եւ թելով սուլթանի «ըբուլթիւնները, նենգամտութիւնները անոր ծակատին կը զարնէ, իբր յաւիտենական դատախիշը «Միծ-Մարդասպան» անշնչելի տիտղոսը:

Կլատոսոնի ծայրը իսկոյն արծազանց գտաւ աշխարհի ամեն կողմը, ուր արդէն մարտիրոս Հայաստանի հառաչներն ու սարսափի սրտածննդի լուրերը հասած էին:

Փրանսական ազատական եւ բարեկիրճ քաղցիները կը գնահատեն Կլատոսոնի ծառը: «Ընթրանսիճմ» անանիւթը Կլատոսոնը «ազգերու ազատամար» և Միծ մարդասէր կը յարձակի Փրանսական կառավարութեան վրայ: «Ասա՛ն, կըսէ ազատական թերթը, Փրանսայի համար դիւցազմական դարը անցած է եւ փոքրզուլթանի դարը կայ: Անք տէրութիւնները անխոյժ կըրպով կը դիտեն վայրագ Ապրիլ-Համբոյի սպանութիւնները: Փրանսական կառավարութիւնը աւելին կընէ, կը քաջալերէ զանոնք եւ վերջերս խորհուրդ կընէր զհաւանք համար թէ, Մարսիլիա սպաստանած անարեկ հայերը պէ՛տք էր սուլթանին յանձնել»:

Փրանսայի մէջ մարդասիրական շարժումը ստանաւ է: Կարգ մը աղտոտ ու վարձկան թերթեր, ինչպէս «Թան» ու «Տէպա», որոնք ցեխին մէջ ինկած մէկ փողը լեզուով վերցնելու անամթութիւնը ունին, կը ջանան ըլլատել ժողովուրդին համակրանքը: Այդ նման ու շահամիտ երևոյթը կը տեսնուի նաև գերմանական եւ արտքիական հրէայ թերթերուն մէջ:

Քրիստոնական կառավարութիւնը իր ժողովուրդին բուն հոսանքին արջել շարժած կաշխատի, եթէ ոչ կասեցնել, գոնէ մեղմացնել զայն: Կըլուսացի թէ Մալգրի, աշխարհի բարոյապէս ամենէն բարձր ժողովուրդի մը կամքին առջև խնայարեցով վերջ պիտի տայ Հայաստանի մէջ կատարուած զարնուրելի սրամտերու շարքին:

Սուլթանը իր շարքիները արդարացնելու համար, աշխարհի մէջ ուր որ ոճիւրներ, եղենակագործութիւններ գործուելն ան օրինակ կը բերէ, ըսելով թէ միայն իր ժողովուրդը չէ, որ այդ տեսակ ընթացքի մէջ կը գտնուի:

Իսկ այդ յեղափոխականներուն վարկը կտորելու համար միմոտութեան կը դնէ անխախտ սուլթանը: Կը ջանայ համոզել Ռուսիան, թէ հայերը ոչնչակամներ են, Փրանսան թէ անիշխանականներ են, իսկ կը յորդորէ Ասգիան, որպէսզի գգուշանայ հայերէն, որոնք եթէ իր կամքով իրաւապէս դաւադիրներուն հետ համախոհ են: «Հայ յեղափոխականները, կը կակազէ փոսած Բ. Դուրը, եղենակագործներու հսկայ ընկերութիւն մ'են աշխարհի ամեն կողմը տարածուած, որ անարկութիւնն է: Եւրոպայի բոլոր կանոնաւոր կառավարութիւններուն, ասոնք մեջազգային ուժանակ, ումը շինող ընկերակցութեան մէկ մասը կը կազմեն»:

«Սթանտարտ» առաջնորդողի մը մէջ պատասխանելով սուլթանի այդ շարժման հարցին կըսէ «Թիւսանի դաւադրութեան յայտնելը թիւրքերի նենգամտութեան գործիք մ'եղաւ, որով կը ջանայ աշխարհի առջև ինքզինքը արդարութեան տիւրար ներկայացնել: Բայց սուլթանի այդ «նքնաշատագովութիւնը յիմարական է: Զէ տեսնուած, որ իրամոլացի մը ումը նետելով անգլիական քաղաք մը մէջ իր կամքովները շարժուած ըլլան: Քրիստոնական ոտնակառութիւնը այդ մեջոցին չը դիմեց քնաւ. ընդհակառակը, աշխատեց իր կամքով ժողովուրդին վիճակը բարելաւել, արդար օրէնքներ հաստատելով: Սուլթանը շատ լաւ գիտէ ատիկա»:

Իսկ Գերման-Չեխոստանական թերթ մը խիստհամակրական յօդուած մը մէջ պատարակելով ռիւսաստանական անտարբերութիւնը, ինչ զարմանք եւ վրդովմունք կը յայտնէ այն բոլոր եւրոպական թերթերուն, որոնք կը դատաւարտեն հայ յեղափոխականներն ընթացքը: Իրականութեամբ այդ մոլորաբանքները, կը բացակայէ լրագիրը, նկարագրելով հայերուն դարաւոր հաւատանքը, որ այլախն

յուսահատ եւ անօգնական կացութեան դիմաց հայերը դաւադրութիւն են սարքեր սուլթանի դէմ: Նոյն ժամապարհով չէ՞ն ընթացող բոլոր ժողովուրդները. արդեօք Նապոլիայի ժողովուրդը, Կարիպալտին եւ իրենները յոյն ընդհանուր դաւադրութեան մեջըցով չէ՞ր, որ յաղթանակեցին եւ ձեռք բերին անկախութիւն:՝

Երբ Անգլիա վրէժ կը գոռայ, երբ մեծինկ-մեծինկի վրայ կը գուժարեի, սուլթանը կը ծիծաղի, խօսքը կը թռչի կըսէ, ու առաջ կը տանի իր հայաջինջ գործը: Խօսքերէ գլուխնիս ուռեցաւ: Մեր դիակներուն պետի շնորհի միջ կենդանութեան իրաւունքները: Թող չը գարձանայ ուրիւմ Եւրոպան, թէ մենք ի՞նչ մեղքներով մեր դատը ստալ կը մեկնը:

Անգլիոյ համազգային շարժումը կարծես չի համարձակեր Մանչը անցնի: Եւրոպական ցամաքին վրայ սիրուն Զեկեցիքիս է, որ իր վարքիս, այլ լիւսմ՝ ձայնը կը բարձրացնէ շարասանջ ժողովրդի մը կրտսի հաւար: Փրանսական կառուարութիւնը, թումս՝ թեքը երբ կը ծաղրէր Անգլիոյ, մանաւանդ Զեկեցիքիոյ ազգային ցոյցները, Վեկեթլ. Թէլէ ազատասեր գաւախները կը պատասխանէին՝ Մենք գիտենք, թէ քաղաքականապէս մեծ ազգ մը չենք եւ մեծ ազդեցութիւն չունինք, բայց երբ կարգը մարդասիրութեան կուգայ, ուրիշ իրատիկ պէտք չունինք: Մարդասիրութիւնը երկրի ծաւալէն կախում չունի: Մենք մեզ կը նկատենք մարդկային մեծ ընտանիքին մէկ մասը եւ իրաւունք ունինք մեր ձայնը բարձրացնել այդ ընտանիքին տառապող ժողովուրդներուն ի նպաստ:՝

Բարցրիկ Զեկեցիքիոյ այդ ինքնաբերու ինքն անկեղծ համակեր արտայայտութիւնը պաշտօնի կընէ այդ երկրին անունը, որ այնքան մտրիկ է ամեն հայու սրտի:

Միւս երկրքը, որ տար համակրութիւն ցոյց կուտայ հայկական դատին, Իտալիան է, ուր Կարիպալտի շունջը մեզու խամդավառ կը պահէ աւելնով եւ հրայրքով լի խտալացիները: Անգլիոյ օրինակին նետուելով հոս ալ կը կազմակերպուին ահազին մեծինկներ ուր կըսու ձեռքը կարողասանքն եւ լուտանքներ կուղուին Մեծ-Մարդասպանի հասցէին:

Ումպէթօ Թագաւորը խորապէս կը շահագրգռի Անգլիոյ մարդասիրական շարժումէն եւ իր սքանչացուցիչ կը յայտնէ՝ Կլատուքօսի կրովի եւ վի՛ն ոգուն եւ յոյս կը յայտնէ, թէ ընդհուպ նպատարաւոր լըծում մը կ'ստանայ արեւելեան հարցը:

Իտալիոյ հակաթրքական շարժման ոգին է, իտալիոյ դիւցազնին Կարիպալտի տղան՝ Ճէնէրալ Մոսթօթի Կարիպալտի, որ նախագահն է կազմակերպած յանձնակալին:

Սիաստաւէր Գերմանիոյ մէջ ալ սկսած է հայասէր շարժում մը, բայց կառավարութիւնը ծեղբ կընէ խեղդելու համար: Երբ Աստոյ պատուհասը անգլոթէն հայերը խողովողի կուտար, Գերմանիոյ ոտիկան կայսրը, իբր նշան իր անթառամ բարեկամութեան, անոր կուղղուէր, իր գերդաստանին լուսանկարը: Սուլթանը այս անակնկալ ծծնէն իրեկայեղ՝ առանձին նամակով շնորհակալութիւն կը յայտնէ Վեկեթլին, ծիշտ ժամանակին դրկած նւէրին համար, եւ կը կոտուանայ անոր, թէ օտար քրիստոնեաներուն ո եւ ի վտանգ չը պետի պատահի իր երկրին մէջ եւսլը:

Մալապրիին ալ պատույ խոստում կուտար ներքինապետ սուլթանը եւ սակայն մեր զեռեր միայն իր ընկերքը: Գերման կայսրը, որուն համար մեր սիրտը երբեք չէ տաքցած, հակադրութիւն շատ կ'անործի: Ի՛նչ կարելի է յուսակ կայսր մը, որ Աքիլէսի դարերը կ'երազէ եւ որքա՛ն երանաւետ պետի զգայ գինքը, եթէ Հոմեր մը ունենար իբր երգիչ: Ամեն երկիր մարդկութեան ընդհանուր բարեբարքն ունեցած է, որոնցմով կարող են պարծիլ բոլոր ազգերը: Գերմանիան չէ՞ ծանծ դեռ այդ սիրտը: Գերմանները չեն կրնար հպարտանար. Պիզմարքով, այդ մարդկային անեծքներով ծանրաբեռնուած նոխարով:

Գերմանիոյ կայսրը արդեօք այդ անժամանակ ընծայով հայութեան արցճնքը կը հեզնէր...

Փրանսան դեռ ոչինչ չըբաւ: Մեր նախասիրական ազգը հիասթափ կընէ մեզ այսօր: Փրանսական կառավարութիւնը, սուլթանի փափուկ սիրտը չը վերաւորելու համար, այնքան ստորնացաւ, որ իր կողմին վրայ ստանջակախութիւն միտող Օսմանեան պարսի 15 տղաները, Պուէնս-Ալբէս արտարքեց, որպէսզի կարող չըլան վերադառնալ: Փրանսայի այդ հարւածը անմոռանալի պետի ըլլայ մեզի համար: Փրանսական լրագրութիւնը գրեթէ ցարկն շուրջ կը սկըտայ կըր անիկա ժառի: Փրանսան ուրախ է, երբ տիրի՛ հանրապետութիւնը սուգ կը բռնէ: Սոսկալի չէ՛ ահազին բարձրութեան մը վրայ զանաղ ազգի մը բարոյական անկումը:

Յարի՛ Անգլիոյ Թագաւորին այցելութիւնը, Գամպրին՝ սուլթանի նկատմամբ բռնած խիտ ընթացքը բշկի մը փոխել տւած են Փրանսական բախտակերտը թերթերու լիգուն, բայց ժամանակաւոր է ատիկա:

Ռուսական լրագրներուն մէջ ալ ժամանակէ մը ի վեր ւայն շունջ մը կը փէլէ:

Պուկարիա գրկարաց կընդունի մարդակեր Համեղի ընդամեններէն պիտոյ հայ գաղթականները եւ ձրի կը տեղափոխէ զմտնը իր նո-

ղին վրայ: Պուկարիա դեռ կըզայ իր եղբայրներուն քաշած կակիծները, եւ զեռէ թէ ի նչ է մոնկուական հալածանք ըստած: Զննք կրնար մեր հրճանքը զպպել ազնի Պուկարիոյ մեր տարաբախտ եղբայրներուն ցոյց տւած սիրաւիք ասանջակախութեանը համար:

Թ Ռ Ո Ի Յ Ի Կ Թ Ե Ր Թ

№ 11 Հ. Յ. Դ Ր Օ Շ Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն № 11
25 Սեպ. 96 Կ. Պ Ո Լ Ս Ի 25 Սեպ. 96
ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷԻ

Ձեզ ենք դիմում, դո՛ւք, դիպլոմատներ, քաղաքագէտներ, ազգերի տէրեր, պատմութիւն անողներ, մեր բողոքող նախափնքով լէքը խօսքը ամենից առաջ ձեզ ենք ուղղում:

Ի՞նչ արիք դուք, երբ տաճիկ ամբոխի սրիկայ մասը, զօրքի, ոստիկանութեան հետ միասին ձեռք-ձեռքի տւած մայրաքաղաքի փողոցներով թափառելիս հայ բանւորը, հայ վաճառականը, հայ քահանան, հայ ինտելիգենտն էր որոնում ու տեղն ու տեղը, ձեր աչքի առաջ, օր ցերեկով անպատմելի դժոխային տանջանքներ տալով՝ մաս մաս անում...

Դուք գիտէիք, որ Պոլսի զանազան թաղերում—ամբողջ Պոլսում—նոյնանման տեսարաններ էին տեղի ունենում. բայց իրենց կատարելութեանը հասցրած անմեղ հայերի անմեղ արիւնով էր ներկուում ամբողջ Պոլսի փողոցները, տները, խաներն ու խանութները—անկէն չէր մնացել, որ արիւնով չոռոգուէր. մահն էր, որ իր սև թւերը տարածել էր դժոխացած Պոլսի վրայ...

Մտածեցի՞ք արդեօք բռնել արեան մէջ շաղախւած արիւնով պատած սուրը, զպպել արիւնարբու, արիւնածարաւ, վայրագ դազանը: Ո՛չ, դուք միայն միջոցներ ձեռք առաք՝ բոլորդ միասին, որպէսզի դարերի ընթացքում կեղեքող-հալածողը ազատ մնայ՝ գլուխը բարձրացրած ստրկի հասցրած վնասից:—Դուք այդ վնասը պակասացնել ջանացիք—այդ վնասը ձեր սեփական վնասն էր որովհետեւ: Փոխանակ արիւնը կանգնեցնելու անմեղներին օգնութեան հասնելու, դուք կէս գիշերով արեան հեղեղների միջով հերոսների մօտ վաղեցիք ու կրկին դիպլոմատիական խաղերով, զանազան խոստումներ առաջով բանկը ազատել փութացիք... Իսկ այնտեղ ամենուրեք տաճիկը իր գործն էր տեսնում, հազարաւոր անմեղների արեան հետ կանանց ու երեխաների անմեղ արիւնը խառնելով: Այդ դուք տեսնում էիք ու լուռ մնում, չնայելով ազնիւ խօսքին, որ վեց այսպէս ասած մեծ պետութիւնների ներկայացուցիչներդ ի դիմաց Մաքսիմովի, ծնկաչոք տւել էիք բանկի հերոսներին կոտորածը կանգնեցնել խոստանալով, հայկական դատի, հայ ժողովրդի շահերը առաջ բերելով... Խաբեցի՞ք:

Այդ էին պահանջում ձեզից ձեր պաշտօնական պարտականութիւնները, այդ էին պահանջում վերջապէս ձեր մարդկային պարտականութիւնները:

Մի՛թէ արդարեւ քաղաքական կեանքի մէջ ամենատարրական մարդկային պարտաճանաչութիւնն անգամ

բացակայում է ու եւրոպական ազգերը իրենց ներկայացուցիչներով չեն կոչուած գէթ որոշ չափով կարգ ու կանոն մտցնել այնտեղ, ուր դժոխք է տիրում...

Եթէ հազարաւոր անմեղների ողբ ու արցունքը, ամբողջ մարդկութեանը դիմած նրանց օգնութեան ճիշդ ու աղաղակը ձեր սրտին ոչինչ չի ասում ու դուք ընդունակ էք այդ բոլորին սանձարտութեամբ նայելու, հեռացէ՛ք, — մի վրդովէք մեր գազանացած խիղճն ու միտքը...

Եթէ այս անգամ էլ հայ ժողովրդի անմեղ արիւնք ի գուր թափուած լինի, եթէ այս անգամը վերջինը չլինի, մտաւայ ահոնելի կուէի համար մեզ մտածել կրճնայ նորանոր միջոցների, տարբեր ձևի ու ծաւալի մասին, որից փնասուողները յամենայն դէպս միայն մենք չենք լինի... Ինչ կը լինի, թող լինի... Բայց և այնպէս մեր գրգռուած խղճի ու մտքի, մեր արիւնով պատած աչքերի առաջ մի բարոյականացած անբարոյական միտք է անցնում. որը մեզ վրայ սառսուռ է բերում...

Եթէ հայը իրաւունք չունի խաղաղ մարդավայել կեանք վարելու, այդ իրաւունքից նա կաշխատի զրկել և իր բոլոր թշնամիներին...

Եթէ արցունք, — թող ուրե՛ս արցունք...

Վ Ե Ր Զ Ի Ն Լ ՈՒ Ր Ե Ր

— Փրանսայի տիկիներու մասնախումբ մը յատուկ ազերսագրով թախանձագին կը խնդրէ ուսաց ցարուհիէն, որպէսզի միջամտէ ցարին քով մարտիրոս Հայաստանը փրկելու համար:

— Թիւրք կառավարութիւնը որոշեր է հայ յեղափոխականներուն հետ բանակցութեան մտնել, խոստանալով Ասիոյ բոլոր նահանգներուն մէջ բարենորոգումներ մտցնել, միայն թէ ուումբերու գործածումը դադարեցնեն: Ասոր համար Տիրան-պէյ Տատեան, Արթին փաշայի տղան, տաճիկ կառավարութեան կողմէ յատուկ պաշտօնով կը մեկնի Եւրոպա յեղափոխականներուն հետ համաձայնութեան մը յանգելու համար: Բարով, հազար բարով երթայ...

— Երզնկայի գաւառի, Քեմալն գիւղի մէջ խառնակութիւններ ծագած են, ուրկէ տաճկական զօրքերու հրամանատարը պատերազմական նախարարին հեռագրած է, որ եթէ զօրաց ուտիլիթի համար շուտով դրամ չուղարկուի, ինքզինքը ամեն պատասխանատուութենէ ազատ կը նկատէ:

— Պ. Գամպոն սուլթանին յայտարարած է, որ եթէ խուզութիւններն ու ջարդերը նորեն սկսին, ամբողջ Եւրոպան զինու զօրութեամբ պիտի միջամտէ:

— Էլիւն-Լարբերդի մէջ նոր ջարդեր տեղի ունեցած են: Անգլիական տեղեկութիւններու համաձայն, ամբողջ հայ ազգաբնակչութիւնը բնաջինջ եղած է, իսկ ըստ տաճկաց 600 հօդի սպաննուած են:

— Ուրբաթ, սէլամլըքի օրը, 500 երիտասարդ սօֆթաններ, յարձակեցան Երլտզի վրայ գահընկէջ ընելու

համար սուլթանը, բայց յանկարծ Երլտզի պահապան գունդէն պաշարուելով՝ մեծ մասով կոտորուեցան. մնացածները յայտնի չէ թէ ինչ եղած են:

— Վրաւի թէ Պոլսոյ դեսպանները խիստ ազգեցիկ դիրք մը բռնած են սուլթանի դէմ. կը գովեն մասնաւորապէս Ռուսիոյ դեսպանին կորովի ընթացքը:

— Պոլսոյ կողմը, Փաթիհ մշկիթին վրայ կարմիր տաւերով տաճկերէն խոշոր յայտարարութիւններ փակուած են, որուն մէջ հրաւեր կը կարգացուէր բոլոր մահմետականներուն, որպէսզի հայերուն նկատմամբ թշնամական դիրք չի բռնեն: «Անոնք, կաւելցնէ յայտարարութիւնը, մեր բարեկամներն են եղեր, բայց մենք չենք հասկցեր. անոնց թշնամութիւնը թիւրք ժողովրդին դէմ չէ, զորս իրենց եղբայրները կը համարեն, այլ սուլթանի կործանարար վարչութեան դէմ է, որուն դէմ պէտք է ըլլայ նաև ամեն մահմետական:

ՆՆՆՐԱՏՆՈՒԹՈՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՎՐ

Հայ Յեղ. Դաշնակցութեան սնդուկի մէջ ստացուած են. Դէվլէթի Արիստոկրատից 10 ռուբլի, Պետրոսից 10 ռուբ., № 55-ից 3 ռուբ., № 65-ից 7 ռուբ., № 75-ից 5 ռուբ.:

Բօրք. Եամբօլի «Սասունեան» կովտէի սնդուկի մէջ ստացուած է Պորիսովկրատի ազգայիններէ 100 Փրանկ Անվէրսից ստացուած է 360 Փր.:

Փիլիպպոպօլից ստացուած է 1100 Փրանկ: Սիլիվայի «Օժանդակ» կովտէի միջոցով ստացուած է. Ութարձայի կայարանի հայ գաղթականներէ 40 լէֆ., Պորիսովկրատ 30 լէֆ., Բայաճըք 33 լէֆ., Բարապուտար 25 լէֆ., Բարնապատ 63 լէֆ., 60 սանթ. Էպի Զաղրա և Ելնի Զաղրա 34 լէֆ.:

«Նաւահանգստի» սնդուկի մէջ ստացուած են. Մաէթիքսոն քաղ.ից Մորակ խմբի Մարտիրոսի ձեռք մի քանի ազգասէր երիտասարդներից 61 ռուբլի, Մի ոմն 5 ռուբ., Սովրաբանթիոն 5 ռուբ., Շահպազեան 10 ռուբլի, «Նէր Ուխտաւորից» մի հրացան:

Նոր-Բերդի համակրող ազգայիններից 29 ռուբլի 40 կոպէկ, Արարատ դաշտէն. — Արմէն 5 ռուբլի, Արեժ 5 ռուբ., Գաղթական 15 ռուբ., Վարազդատ 8 ռուբ., Պերճ 15 ռուբ., Հրաչեա 10 ռուբ., Թիւման 5 ռուբ., Խոսրով 5 ռուբ., 12 պատանիներէն 20 ռուբ., Ոսերիմ 5 ռուբ., Սիմ. Արեգակից 15 ռուբ.:

«Հուր» ք-ի Մորակ խմբից. Սուրէն 2 ռուբ., Ստեփան-Արտաշէս 3 ռուբ., Գասպար 30 ռուբ., Մամբրէ-Համբարձում 2 ռուբ., Շիրին 5 ռուբ., Սիմոն 10 ռուբ., Հայ մշակներից 10 ռուբ., Մեղքոն 2 ռուբ., Գալուստ 1 ռուբ., Մի ազգասէրից 1 պէսդան հրացան և 30 փամփուշտ:

«Կանաչ» ք-ի Մորակ խմբից Մինաս Աղայի և Յովհաննէսի միջոցաւ հանգանակած 162 ռուբ. 30 կոպ.: Տր. կեդ. կօմ. սնդուկի մէջ ստացուած է Փայլակից 10 լիրա:

Դաշնակցութեան անձամօթներից խնդրում է թղթակցութեան և ներատուութեան համար ղեմել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան